Հավելված N2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11003/23-ԵՑ3» պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում ցերեկային կենտրոնում» |
| Դրամաշնորհի N | 032-11003/23-ԵՑ3 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2023- 31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2023- 31.12.2023 |
| Ներկայացման օր | 09.02.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Արթուր Թորոսյան, նախագահ |

## 2. Բովանդակային հաշվետվություն

### 2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

1. Ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում
2. Շարունակական կրթություն և ինքնուրույնության խթանում
3. Գլխուղեղի առողջության խթանում և պահպանում
4. Գնահատում և ամփոփում

### 2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում ծառայություն է մատուցվել ընդհանուր առմամբ 37 այցելուի՝ Երևանի տարբեր համայնքներից, որոնցից 24-ը՝ ըստ ՄՍԾ ուղեգրի: Կենտրոնում այցելուները ծառայություններից օգտվել են շաբաթական հինգ օր (երբեմն նաև շաբաթ օրերին՝ էքսկուրսիայի դեպքում)՝ 2-5 ժամ տևողությամբ, չոր սննդային ընդմիջումով: Առանձին դեպքերում՝ ազգային խոհանոցի ներկայացման մշակութային օրերի շրջանակներում, այցելուներն օգտվել են նաև տաք կերակրատեսակներից:

Ծրագրում ընդգրկված այցելուների համար կատարվել է սոցիալ-հոգեբանական կարիքի գնահատում, ինչպես նաև գերիատրիկ համակողմանի գնահատում՝ սոցիալական աշխատողի, հոգեբանի և բժշկի կողմից: Գնահատման արդյունքների, մասնագետների դիտումների հիման վրա ընտրվել են նրանց հետ աշխատանքի մոտեցումները: Շահառուները ներգրավվել են նաև որոշումների կայացման գործընթացներում, նրանց ցանկությունները և առաջարկները հաշվի են առնվել տարաբնույթ խմբակների, զբաղմունքների տեսակների, էքսկուրսիաների և նրանց ժամանցն ապահովող այլ միջոցառումների պլանավորման գործում: Այդ հարցում ակտիվորեն աշխատել և աշխատակիցներին օժանդակել էԿենտրոնում ձևավորված Տարեցների խորհուրդը, որի անդամները Կենտրոնի մի շարք ընտրյալ այցելուներ են:

Տարբեր ժամանակաշրջաններում գործել են խմբակներ և ակումբներ, որոնցում շահառուներն ընդգրկվել են ըստ իրենց նախասիրությունների, հետաքրքրությունների և կարողությունների: Այդպիսիք են եղել՝ անգլերենի ակումբը, շախմատի ակումբը, ֆիլմասերների ակումբը, ասեղնագործության խմբակը, կարպետագործության խմբակը, թաղիքագործության խմբակը, երգի և պարի խմբակը: Շաբաթական առնվազն 1 անգամ կազմակերպվել է արտթերապևտիկ և հոգեբանական խմբային աշխատանք՝ ուղղված տարաբնույթ խնդիրների հաղթահարմանը: Յուրաքանչյուր օր կազմակերպվել է ֆիզիկական և գլխուղեղի առողջության խթանման հանդիպումներ՝ նախատեսված 3 անգամի փոխարեն, Իրականացվել են ճանաչողական և ժամանցային էքսկուրսիաներ՝ այց Հայաստանի տեսարժան վայրեր, թանգարաններ, մշակութային կենտրոններ, արտադրամասեր, տպագրատուն և հետաքրքիր այլ վայրեր, որտեղ այցելուները մասնակցել են կրթական որևէ ծրագրի՝ համահունչ էքսկուրսիայի թեմատիկային:

Այցելուների շարունակական կրթության և իրազեկման նպատակով ամիսը նվազագույնը 1 անգամ կազմակերպվել են սեմինարներ՝ առողջության, իրավունքի, սոցիալական պաշտպանության, մեդիագրագիտության այլ թեմաներով: Կենտրոնի առօրյան, սակայն, չի սահմանափակվել միայն վերոնշյալ միջոցառումներով. կազմակերպվել են նաև մշակութային ճանաչմանը նպաստող հանդիպումներ թանգարաններում, պատկերասրահներում և հանրային այլ վայրերում: Խթանվել է կապը Մ.Գալշոյանի անվ. հիմնական դպրոցի հետ՝ աշակերտներին պարբերաբար հյուրընկալելով կենտրոնում և ներգրավելով տարատեսակ ծրագրերում:
Ամիսը մեկ անգամ կազմակերպվել է «Ուտիս տատի խոհանոցից» խորագիրը կրող խոհանոցային օր, որի ընթացքում այցելուները համատեղ պատրաստել են ազգային որևէ ուտեստ, ինչն արդեն ավանդույթ է դարձել Կենտրոնում՝ նպաստելով մշակութային ճանաչմանը, հարաբերությունների բարելավմանը, ազգային խոհանոցի հին բաղադրատոմսերի վերհանմանը: Կենտրոնում զբաղմունքների բազմազանությունն ապահովվել է նաև ընդհանուր առմամբ 25 տեղացի և արտասահմանցի կամավորների օգնությամբ:

Խմբակներից բացի՝ կայացել են նաև գլխուղեղի առողջության խթանմանը և կոգնիտիվ ֆունկցիաների խանգարումների կանխարգելմանն ուղղված հանդիպումները: Յուրաքանչյուր օրն սկսվել է ֆիզիկական և կոգնիտիվ վարժություններով և ավարտվել խմբային աշխատանքներով՝ խմբակներ, խմբային հոգեբանական աշխատանք, արտթերապիա, թեմատիկ զրույցներ, միջոցառումներ՝ տոների ու ծննդյան տարեդարձների նշում, հայտնի դեմքերի հյուրընկալում, մասնակցություն էքսպոների և արտագնա այլ միջոցառումների:

Տարեցների շրջանում կամավորական աշխատանքը խթանելու, նրանց ռեսուրսներն իրացնելու, ինչպես նաև նրանց ֆունկցիոնալ ակտիվությունը պահպանելու

| |
|---|
| նպատակով Կենտրոնի այցելուներից ձևավորվել է տարեց կամավորների խումբը, որը տարվա ընթացքում ներգրավվել է սիմֆոնիկ նվագախմբի համերգների կազմակերպչական, նախապատրաստական աշխատանքներում, իրականացման ընթացքում հիմնական աշխատակիցներին այլ գործերում օգնելու հարցերում:<br><br>Իրականացվել է հարցում կենտրոնի ծառայությունների ու դրանց որակի վերաբերյալ: Բացառապես բոլոր այցելուները գոհունակություն են հայտնել ծրագրից, որոշ առաջարկներ արել ծառայությունների ընդլայնման, խմբակների տեսակների ավելացման վերաբերյալ, որոնք հաշվի կառնվեն ռեսուրսներ հայթայթելիս: Իրականացվել է ծրագրի արդյունավետության և ընդհանուր վիճակի վերջնական գնահատում, որի արդյունքները, ինչպես նաև աշխատող մասնագետների դիտարկումները ցույց են տվել, որ էապես բարելավվել է այցելուների հոգեկան առողջությունը, նվազել է դեպրեսիան, բարելավվել են միջանձնային հարաբերությունները, խթանվել է ֆիզիկական ակտիվությունը, այցելուները շարունակական կրթության ծրագրերով նոր հմտություններ են յուրացրել՝ մասնակցելով ասեղնագործության, կարպետագործության, թաղիքագործության, կարի դասերի:<br>Ցերեկային կենտրոնի մի քանի այցելու ակտիվորեն ներգրավված է եղել «Տարեցների կրեատիվության լաբորատորիա» սոցիալական ձեռնարկատիրության աշխատանքներում՝ օգնելով կարելու, ձևելու, ասեղնագործելու հարցերում: |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| Ցերեկային կենտրոնում իրականացված աշխատանքների մասին Ասոցիացիայի ֆեյսբուքյան էջում հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/ahaop |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող հիմնական խնդիրը պետական բյուջեով սահմանված գումարի անբավարար լինելն է եղել, որն Ասոցիացիան լրացրել է այլ գործընկերների աջակցությամբ: Ասոցիացիայի ցերեկային կենտրոնի նորարարական ծրագիրն օրեցօր ճանաչում է գտնում հանրության շրջանում և փաստել է իր արդյունավետությունը ծառայությունից օգտված տարեց այցելուների և նրանց ընտանիքի կյանքում: Այն առողջ ծերացման հայեցակարգի ներդրման հրաշալի նախադեպ է Հայաստանում և պետության կողմից պատշաճ ֆինանսավորման դեպքում կարող է ընդլայնել իր նորարարական ծառայություններն ու աշխատակազմը՝ բազմապատկելով արդյունավետությունը և կատարելագործելով մոդելը: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

| |
|---|
| Կիրառելի չէ: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Գործողություններն իրականացվել են աշխատանքային պլանի սահմաններում, իսկ առանձին ենթագործողություններ, ինչպիսիք են առանձին զբաղմունքների և խմբակների կայացման պարբերականությունը, սահմանվել են ըստ նպատակահարմարության՝ գերազանցելով նախատեսված քանակը:

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ
Նախագահ ՝ Ա. Թորոսյան

Digitally signed by GHAZAZYAN LIANA 6201810706 ___________________________________
(ստորագրություն)